

**ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՏԻՏՈՒՏԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

1.Ընդհանուր դրույթներ

1.1.ՎՊՄԻ ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՈՒԳԸ) գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու ցանկություն ունեցող ուսանողների, ասպիրանտների, հայցորդների և դասախոսների կամավոր անդամակցության և գործունեության վրա հիմնված ինքնակառավարման ներկայացուցչական մարմին է:

1.2.ՎՊՄԻ ՈւԳԸ-ն իր գործունեությունն իրականացնում է՝ ելնելով ՀՀ Սահմանադրությունից և օրենսդրությունից, միջազգային իրավունքի նորմերից, ՎՊՄԻ և սույն կանոնադրությունից:

1.3.ՎՊՄԻ ՈւԳԸ-ն ՎՊՄԻ կառուցվածքային ինքնուրույն ստորաբաժանում է:

1.4.ՈւԳԸ-ն ունի խորհրդանիշ:

1.5.ՈւԳԸ-ն սահմանված կարգով կարող է ունենալ կլոր կնիք, անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ, ենթահաշիվ ՎՊՄԻ բանկային հաշվում:

1.6.ՈւԳԸ-ն ՎՊՄԻ ղեկավարության համաձայնությամբ, գիտական մասի իրազեկությամբ, ելնելով նպատակներից և խնդիրներից, կարող է ինքնուրույն կապեր հաստատել ՀՀ և արտերկրի հասարակական, պետական այլ գիտական կազմակերպությունների հետ:

1.7.Ընկերության անվանումը ռուսերեն՝ Студенческое Научное Общество, անգլերեն՝ Student Scientific Society: Իսկ կարճ անվանումները. հայերեն՝ ՈՒԳԸ, ռուսերեն՝ CHO, անգլերեն՝ SSS:

2.Ընկերության նպատակն ու խնդիրները

2.1. ՈՒԳԸ-ի գործունեության նպատակն է.

- զարգացնել ուսանողների գիտական ստեղծագործական ունակությունները, գիտահետազոտական գործունեության հմտությունները,

- նպաստել ուսանողների հոգևոր զարգացմանը:

2.2. ՈՒԳԸ-ի խնդիրներն ու գործունեության ուղիներն են.

- կազմակերպել և համադասել ուսանողների գիտական գործունեությունը,

- հաստատել և զարգացնել այլ բուհերի ՈՒԳԸ-երի, գիտական հիմնարկների հետ համագործակցություն,

- նպաստել միջազգային և միջբուհային գիտական կոնֆերանսներին, գիտական համագումարներին ու սեմինարներին ՎՊՄԻ ուսանողների և երիտասարդ դասախոսների մասնակցությամբ,

- հավաքագրել, համակարգել գիտական և գործնական բնույթի նյութեր, այդ թվում նաև համացանցի միջոցով,

- լուսաբանել ՎՊՄԻ ՈՒԳԸ-ի գործունեությունն ու երիտասարդ հետազոտողների նվաճումները,

- երաշխավորել ՈՒԳԸ ակտիվ և բարձր առաջադիմությամբ անդամներին ՎՊՄԻ ասպիրանտուրայի ընդունելության համար,

- կազմակերպել ուսանողական գիտաժողովներ, կոնֆերանսներ, սեմինարներ, գիտահանրամատչելի դասախոսություններ, մասնագիտական օլիմպիադաներ, քաղաքացիական ու հասարակական ուղղվածություն ունեցող միջոցառումներ,
- համագործակցել ՎՊՄԻ գիտխորհրդի, ռեկտորատի, դեկանատների, ամբիոնների և լաբորատորիաների հետ,
- ներգրավել ցածր կուրսի ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում:

3. Ընկերության կառուցվածքը և ղեկավար մարմինները

3.1 ՈՒԳԸ-ի համագումարը

3.1.1. Ուսանողական գիտական ընկերության Բարձրագույն ղեկավար մարմինը ուսանողական գիտական ընկերության համագումարն է:

3.1.2. ՈՒԳԸ համագումարը գումարվում է ոչ պակաս, քան տարին 1 անգամ:

3.1.3. ՈՒԳԸ-ի համագումարը

- ընդունում է ՈՒԳԸ կանոնադրությունը,
- փոփոխություններ և լրացումներ է կատարում ՈՒԳԸ կանոնադրության մեջ,
- մեկ տարի ժամկետով ընտրում է ուսանողական գիտական ընկերության խորհուրդ,

• լսում և քննարկում է ընկերության նախագահի հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին,

• քննարկում և որոշում է ՈՒԳԸ-ի կառուցվածքը և գործունեության կարևորագույն ուղղությունները:

Համագումարը համարվում է իրավագործ ՈՒԳԸ անդամների առնվազն 2/3-ի մասնակցության դեպքում: Որոշումներն ընդունվում են ձայների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: Արտահերթ համագումար կարող է հրավիրվել ՈՒԳԸ խորհրդի պահանջով:

3.2. ՈՒԳԸ խորհուրդը

ՈՒԳԸ խորհուրդը հանդիսանում է մշտապես գործող մարմին:

3.2.1. ՈՒԳԸ խորհուրդը ղեկավարում է ՈՒԳԸ գործունեությունը, իրականացնում է ՈՒԳԸ ռազմավարությունը:

3.2.2. ՈՒԳԸ խորհուրդը

- հրավիրում է ՈՒԳԸ համագումար,
- միջոցներ է ձեռնարկում ընկերության համագումարի որոշումների իրականացման համար,

• ինստիտուտի գիտական մասի հետ համատեղ կազմակերպում է ՈՒԳԸ ֆակուլտետային, բուհական, միջբուհական գիտական կոնֆերանսներ: Լավագույն աշխատանքները ներկայացնում է խրախուսանքի,

• կազմակերպում է կոնֆերանսներին ներկայացված աշխատանքների, թեզիսների տպագրություն,

• փոխադարձ կապեր է ստեղծում այլ բուհերի ՈՒԳԸ-ների, ՀՀ և արտերկրի գիտական հիմնարկների հետ,

• մշակում է ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում և համակարգում է ֆակուլտետային ՈՒԳԸ-ների աշխատանքները և ծրագրերը,

- հաստատում է իր աշխատակարգը,
- ստեղծում, վերակազմավորում և լուծարում է սույն կանոնադրությամբ չսահմանված ՈԻԳԸ աշխատանքային օղակները, ինչպես նաև հաստատում է նրանց կազմը և աշխատակարգը, ընդ որում նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերվող որոշ հարցերի լուծման իրավունք,

- որոշում է ընդունում շնորհել ընկերության պատվավոր անդամի կոչում և կանոնակարգում է ընկերության անդամությանը վերաբերվող այլ հարցերը,

- քննում և լուծում է ՈԻԳԸ գործունեությանը վերաբերող ցանկացած հարց:

3.2.3. ՈԻԳԸ խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են բնագիտական և հումանիտար բաժանմունքների ՈԻԳԸ նախագահները որպես ՈԻԳԸ խորհրդի համանախագահներ, ֆակուլտետային ՈԻԳԸ նախագահները: Խորհրդի մնացած անդամները ընտրվում են համագումարի կողմից, ընդ որում ՈԻԳԸ խորհուրդը չի կարող ունենալ 19-ից ավելի անդամ:

3.2.4. ՈԻԳԸ գործունեությունը վերահսկում է ՎՊՄԻ գիտական գծով պրոռեկտորը: Նա ՈԻԳԸ խորհրդի համանախագահներից մեկին նշանակում է ՈԻԳԸ խորհրդի աշխատանքների համակարգող:

3.2.5. ՈԻԳԸ քարտուղարը

- ընտրվում է ՈԻԳԸ խորհրդի կողմից;

- լրացնում և պահպանում է ՈԻԳԸ խորհրդի նիստերի և ՈԻԳԸ միջոցառումների արձանագրությունները, ՈԻԳԸ փաստաթղթերը,

- գրանցում է ՈԻԳԸ նոր անդամներին:

3.2.6. ՈԻԳԸ-ի խորհրդի անդամները պարտավոր են կատարել ՈԻԳԸ համագումարի և գիտական խորհրդի բոլոր որոշումները:

3.2.7. ՈԻԳԸ խորհրդի նիստերը հրավիրվում են համանախագահների կողմից առնվազն ամիսը մեկ անգամ: ՈԻԳԸ խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե նրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի ավելի քան 2/3-ը, իսկ որոշումները ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: ՈԻԳԸ խորհրդի լրացուցիչ նիստերը կարող են հրավիրվել խորհրդի անդամների 1/3 պահանջով:

3.2.8. ՈԻԳԸ-ի բոլոր ղեկավար մարմիններն իրենց լիազորություններից

(կանոնադրությամբ նախատեսված) դուրս իրավունք չունեն իրականացնել ընկերության հետ առընչություն ունեցող այլ գործունեություն:

3.3 Բաժանմունքային ՈԻԳԸ - ներ

3.3.1. Բաժանմունքային ՈԻԳԸ-ն ինստիտուտի ՈԻԳԸ կառուցվածքային օղակ է:

3.3.2. Բաժանմունքային ուսանողական գիտական ընկերությունները ձևավորվում են համապատասխան ֆակուլտետների ՈԻԳԸ-ներից: Բաժանմունքային ՈԻԳԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են ՈԻԳԸ-ի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:

3.3.3. Բաժանմունքային ՈԻԳԸ-ն իր ընդլայնված նիստում մեկ տարի ժամկետով ընտրում է բաժանմունքային ՈԻԳԸ-ի նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար, ովքեր կազմակերպում և համակարգում են բաժանմունքային ՈԻԳԸ-ի աշխատանքները, ներկայացնում բաժանմունքային ՈԻԳԸ-ն և նրա ծրագրերը ինստիտուտի ՈԻԳԸ համակարգում և խորհրդում:

3.3.4. Բաժանմունքային ՈԻԳԸ-ի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը 1 անգամ: Նիստերը հրավիրվում են նախագահի կողմից կամ անդամների 1/3-ի պահանջով: Նիստը իրավագոր է, եթե նրան մասնակցում են անդամների ավելի քան 2/3-ը, իսկ որոշումները ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: Բաժանմունքային ՈԻԳԸ-ն կարող է մշակել իր կանոնակարգը և սահմանել սույն կանոնադրությանը չհակասող այլ կառուցվածքային միավորներ:

3.3.5. ՈԻԳԸ-ի բաժանմունքների ղեկավարները կազմակերպում են բաժանմունքների աշխատանքները, համակարգում համապատասխան ֆակուլտետային ՈԻԳԸ-ների աշխատանքները, կես տարին մեկ հաշվետվությամբ հանդես գալիս կատարած աշխատանքների մասին:

3.3.6. Բաժանմունքային ՈԻԳԸ-երը կազմակերպում են բաժանմունքային ՈԻԳԸ կոնֆերանսներ: Ներկայացված լավագույն աշխատանքները ներկայացվում են ՈԻԳԸ կոնֆերանսին:

3.3.7. Բաժանմունքային ՈԻԳԸ-ն կարող է կյանքի կոչել տարաբնույթ ակումբներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել ֆակուլտետի այլ ուսանողներ:

3.4 Ֆակուլտետային ՈԻԳԸ - ներ

3.4.1. Ֆակուլտետային ՈԻԳԸ-ները ինստիտուտի ՈւԳԸ կառուցվածքային օղակ են:

3.4.2. Ֆակուլտետային ՈԻԳԸ-ները ձևավորվում են ֆակուլտետի խորհրդի և միջմասնագիտական խմբակների երաշխավորությամբ ներկայացված դասախոսներից, ասպիրանտներից և ուսանողներից: Ֆակուլտետի ՈԻԳԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են ՈԻԳԸ-ի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:

3.4.3. Ֆակուլտետի ՈԻԳԸ-ն ընտրում է ֆակուլտետի ՈԻԳԸ-ի նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար, որոնք կազմակերպում և համակարգում են ֆակուլտետի ՈԻԳԸ աշխատանքները, ներկայացնում ֆակուլտետի ՈԻԳԸ-ն և նրա ծրագրերը ինստիտուտի ՈԻԳԸ համակարգում և խորհրդում:

3.4.4. Ֆակուլտետի ՈԻԳԸ-ի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը 1 անգամ: Նիստերը հրավիրվում են նախագահի կողմից կամ անդամների 1/3-ի պահանջով: Նիստը օրինական է, եթե նրան մասնակցում են անդամների ավելի քան 1/2-ը, իսկ որոշումները ընդունվում են անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: Ֆակուլտետի ՈԻԳԸ-ն կարող է մշակել իր կանոնակարգը և սահմանել սույն կանոնադրությանը չհակասող այլ կառուցվածքային միավորներ:

3.4.5. Ֆակուլտետային ՈԻԳԸ-երը կազմակերպում են ֆակուլտետային ՈԻԳԸ սեկցիաներ: Ներկայացված լավագույն աշխատանքները ներկայացվում են բաժանմունքային ՈԻԳԸ կոնֆերանսին:

3.4.6. Ֆակուլտետի ՈԻԳԸ-ի գործունեությունը վերհսկում է ֆակուլտետի ղեկանի տեղակալը:

3.4.7. Ֆակուլտետի ՈԻԳԸ-ի նախագահը կարող է լինել ֆակուլտետի խորհրդի անդամ:

3.4.8. Ֆակուլտետի ՈԻԳԸ-ն կարող է կյանքի կոչել տարաբնույթ ակումբներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել ֆակուլտետի այլ ուսանողներ:

3.5. Մասնագիտական ՈԻԳԸ խմբակներ

3.5.1. Մասնագիտական ՈԻԳԸ խմբակները ձևավորվում են ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված դասախոսներից, ասպիրանտներից և ուսանողներից: Մասնագիտական ՈԻԳԸ խմբակները մշակում և իրականացնում են ծրագրեր, որոնք ուղղված են ՈԻԳԸ-ի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:

3.5.2. Մասնագիտական ՈԻԳԸ խմբակները ընտրում են մասնագիտական ՈԻԳԸ խմբակի ղեկավար, որը կազմակերպում և համակարգում են խմբակի աշխատանքները, ներկայացնում ՈԻԳԸ-ն և նրա ծրագրերը ֆակուլտետի ՈԻԳԸ համակարգում և խորհրդում:

3.5.3. Մասնագիտական ՈԻԳԸ խմբակները կազմակերպում են մասնագիտական սեկցիաներ: Ներկայացված լավագույն աշխատանքները ներկայացվում են ֆակուլտետային ՈԻԳԸ կոնֆերանսին:

4. Ընկերության միջոցները և դրանց օգտագործման կարգը

4.1. ՈԻԳԸ-ի միջոցները գոյանում են ՎՊՄԻ բյուջեից կատարվող մասհանումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից, ՎՊՄԻ օրենսդրությամբ և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

4.2. ՈԻԳԸ անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է ՎՊՄԻ տարածքային, գույքային, տեխնիկական և այլ միջոցներից:

4.3. ՈԻԳԸ-ի միջոցները օգտագործվում են կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

5. Ընկերության գործունեության դադարեցման կարգը

5.1. ՈԻԳԸ գործունեությունը դադարեցվում է համագումարի որոշմամբ՝ ձայների ընդհանուր թվի 2/3 կողմ քվեարկելու դեպքում, ՎՊՄԻ գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. ՈԻԳԸ-ի լուծարումից հետո նրա ամբողջ գույքը և այլ միջոցները պատկանում են ՎՊՄԻ-ին:

6. Անցումային դրույթներ

6.1. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում ինստիտուտի գիտխորհրդի և ինստիտուտի ղեկավարի հաստատումից հետո:

6.2. ՈԻԳԸ կանոնադրության ընդունումից հետո ՈԻԳԸ բոլոր օղակներում, կանոնադրությանը համապատասխան, անց են կացվում ընտրություններ:

Ուսանողական գիտական ընկերության հասցեն՝

Հայաստանի Հանրապետություն;

377200 Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա-36

Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ